

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2021 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
/տևողությունը՝ 150 րոպե/
/գնահատման քայլը՝ 0,25 միավոր/

11-12-րդ դասարաններ

1. Ի՞նչ է աշխարհահամակարգը (գեոհամակարգ): Որո՞նք են նրա բաղադրիչները և բնորոշ գծերը: Աշխարհահամակարգերը քանի՞ տիպի են լինում (Բերե՛ք յուրաքանչյուրից 1-ական օրինակ)..... 3 միավոր

2. Աշխարհագրական հետազոտության մեթոդները լինում են մասնավոր և համաաշխարհագրական: Թվարկե՛ք համաաշխարհագրական մեթոդներն առանց մեկնաբանության.....2 միավոր

3. Ի՞նչ են ՅՈՒՆԵՍԿՈ-ն, ԲՊՄՄ-ը և ՅՈՒՆԵՊ-ը: Ո՞րն է դրանցից յուրաքանչյուրի հիմնական խնդիրը.....1,5 միավոր

4. Որո՞նք են պրոդուցենտները, կոնսումենտները և ռեդուցենտները: Բերե՛ք յուրաքանչյուրից մեկական օրինակ.....1,5 միավոր

5. Լրացրե՛ք տրված գրաֆիկը..... 1,5 միավոր

Ջրօգտագործումն ըստ նպատակահարմարության



Ջրօգտագործողներ

1. _____
2. _____
3. _____


Ջրապատողներ

1. _____
2. _____
3. _____

6. Ինչ է ագրոտեխնիկան, ո՞րն է նրա խնդիրը: Ագրոտեխնիկական ինչ միջոցառումներ կթվարկե՛ք (առանց մեկնաբանության).....2 միավոր
7. Ի՞նչ էք հասկանում «բնական ռեսուրսների տնտեսական գնահատում» ասելով: Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման ժամանակ ո՞ր գործոններն ու ցուցանիշներն են հաշվի առնվում (թվարկե՛ք դրանցից առնվազն 8-ը)..... 3 միավոր
8. Ո՞րոնք են աշխարհագրության զարգացման արդի միտումները: Թվարկե՛ք դրանք առանց մեկնաբանության..... 1,5 միավոր
9. Ի՞նչ է արդյունաբերության տարածքային կազմակերպումը և որո՞նք են դրա հիմնական ձևերը: Տրված նկարում տարածքային կազմակերպման ո՞ր ձևերն են պատկերված ա/ բ/ գ/ դ/ տառերով.....2 միավոր

ա/ 

բ/ 



10. Որո՞նք են երկրի բնակչության տեղաբաշխման վրա ազդող հիմնական գործոնները: Առանձնացրե՛ք դրանցից 4-ը..... 2 միավոր